

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արմեն Մանուկյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ

ORCID ID: 0000-0002-3050-1055

manukyan-armen@mail.ru

DOI: 10.54503/1829-0116-2026.1-27

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ԹԻՖԼԻՍԻ «ՀՈՐԻՉՈՆ» ՕՐԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ*

Բանալի բառեր – Խաչատուր Աբովյան, «Հորիզոն» օրաթերթ, հուշարձան, Հովհ. Թումանյան, Լեռ, «Զանգվի ափերից», արքայանազիտություն:

1858 թ. լույս տեսած «Վերք Հայաստանի» վեպը մեծ հետաքրքրություն առաջացրեց Խաչ. Աբովյանի անձի և գործունեության նկատմամբ, և այդ հետաքրքրությանը իր ավելի քան համեստ ուժերի սահմաններում առաջինը փորձեց բավարարել ժամանակի հայ մամուլը: Նախ Մոսկվայի «Հյուսիսսփայլը» 1858 և 1859 թթ., Փարիզի «Արևմուտք» կիսամյան 1859 թ. և Թիֆլիսի «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը 1860 և 1861 թթ. տպագրեցին մի քանի նյութեր Աբովյանի մասին, որոնք պարունակում էին և՛ կենսագրական տեղեկություններ, և՛ գնահատականներ նրա գործունեության ու մանավանդ «Վերք Հայաստանի» վեպի վերաբերյալ, ապա 1870-ական թվականներին և հետագայում մամուլի այլ օրգաններ շարունակեցին վերոհիշյալ երեքի սկսած շնորհակալ գործը: Դրանց թվում էր նաև Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթը (1908-1918), որն իր տասնամյա գործունեության ընթացքում տպագրել է ավելի քան 20 մեծ ու փոքր նյութ Աբովյանի մասին:

Այդ բազմազան նյութերը ըստ բովանդակության կարելի է բաժանել 3 խմբի՝ 1. Աբովյանի հուշարձանը կանգնեցնելու առթիվ կարծիքներ, առաջարկներ, կոչեր և այլն, 2. 1913 թ. դեկտեմբերի 5-ին Թիֆլիսում Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթում Լեռյի զեկուցումը Աբովյանի մասին ու նրա արձագանքները, և 3. Լեռյի «Զանգվի ափերից» ծավալուն խոհագրությունը, որը պարունակում է ինչպես հետաքրքիր դիտարկումներ Աբովյանի անձի և ստեղծագործության վերաբերյալ, այնպես էլ առաջ է քաշում մի քանի կարևոր խնդիր-խոչընդոտ արքայանազիտության զարգացման ճանապարհին և առաջարկներ դրանք վերացնելու ուղղությամբ: Առանձին-առանձին քննելով 3 խմբերում ընդգրկված նյութերը՝ կարելի է համոզվել, որ «Հորիզոն» օրաթերթը հայ մամուլի այլ առաջատար օրգանների հետ միասին բավականին հետևողական և արդյունավետ աշխատանք է կատարել Աբովյանի

* Հոդվածն ընդունվել է տպագրության 02.04.2026 թ.:

Ուղարկվել է գրախոսության 13.04.2025 թ.:

նի և ընդհանրապես հայ գրողների ստեղծագործությունների հանրահռչակման ուղղությամբ, մանավանդ 1912 թ. դեկտեմբերին Հայ գրողների կովկասյան ընկերության հիմնադրումից հետո:

Armen Manukyan

PhD in Philology

Institute of Literature after M. Abeghyan of NAS of RA

ORCID ID: 0000-0002-3050-1055

manukyan-armen@mail.ru

KHACHATUR ABOVYAN ON THE PAGES OF THE TIFLIS DAILY NEWSPAPER “HORIZON”

Keywords: *Khachatur Abovyan, daily newspaper “Horizon”, monument, Hov. Tumanyan, Leo, “From the shores of Zangu”, Abovyan studies.*

The extraordinary popularity of the novel "Wounds of Armenia," published in 1858, generated enormous interest in the personality and work of Khach. Abovyan and the Armenian press of that time was the first to satisfy this interest within its more than modest forces. First, the Moscow “Northern Lights” in 1858 and 1859, the Parisian semi-monthly “West” in 1859 and the Tiflis magazine “Crane of the Armenian World” in 1860 and 1861 published several materials about Abovyan, containing both biographical information and assessments of his activities and especially the novel “The Wound of Armenia”, then in the 1870s and later, the grateful work begun by the above-mentioned three was continued by other press organs. Among them was also the Tiflis daily newspaper “Horizon” (1908-1918), which during its ten-year activity published more than 20 large and small materials about Abovyan.

These various materials can be divided into 3 groups according to their content: 1. Opinions, proposals, appeals, etc. regarding the installation of the monument to Abovyan, 2. Leo's report on Abovyan at the party of the Caucasian Society of Armenian Writers in Tiflis on December 5, 1913 and its consequences, and 3. Leo's voluminous essay "From the shores of Zangu", which contains both interesting observations about Abovyan's personality and work, and puts forward several important problems-obstacles to the development of Abovian studies and proposals for their elimination.

Looking at the materials included in the 3 groups separately, one can see that the daily newspaper “Horizon”, together with other leading organs of the Armenian press, did quite a consistent and effective job of popularizing the works of Abovyan and Armenian writers in general, especially after the founding of the Caucasian Society of Armenian Writers in December 1912.

Армен Манукян
Кандидат филологических наук
Институт литературы им. М. Абегамяна НАН РА
ORCID ID: 0000-0002-3050-1055
manukyan-armen@mail.ru

ХАЧАТУР АБОВЯН НА СТРАНИЦАХ ТИФЛИССКОЙ ЕЖЕДНЕВНОЙ ГАЗЕТЫ «ГОРИЗОНТ»

Ключевые слова: Хачатур Абовян, ежедневная газета «Горизонт», памятник, Ов. Туманян, Лео, «С берегов Зангу», абовяноведение.

Необычайная популярность романа «Раны Армении», опубликованного в 1858 году, вызвала огромный интерес к личности и деятельности Хач. Абовяна, и этот интерес в пределах своих более чем скромных сил первой попыталась удовлетворить армянская пресса того времени. Сначала московское «Северное сияние» в 1858 и 1859 годах, парижский полумесячный «Запад» в 1859 году и тифлисский журнал «Журавль Армянского мира» в 1860 и 1861 годах опубликовали несколько материалов об Абовяне, содержащих как биографические сведения, так и оценки его деятельности и особенно романа «Рана Армении», затем в 1870-х годах и позже благодарное дело, начатое вышеупомянутыми тремя, продолжили другие органы печати. Среди них была также тифлисская ежедневная газета «Горизонт» (1908-1918), которая за свою десятилетнюю деятельность опубликовала более 20 больших и малых материалов об Абовяне.

Эти разнообразные материалы по содержанию можно разделить на 3 группы: 1. Мнения, предложения, обращения и т.д. относительно установки памятника Абовяну, 2. Доклад Лео об Абовяне на вечеринке Кавказского общества армянских писателей в Тифлисе 5 декабря 1913 года и его последствия, и 3. Объемный очерк Лео «От берегов Зангу», который содержит как интересные наблюдения о личности и творчестве Абовяна, так и выдвигает несколько важных проблем-препятствий на пути развития абовяноведения и предложения по их устранению. Рассматривая материалы, включенные в 3 группы по отдельности, можно убедиться, что ежедневная газета «Горизонт» вместе с другими ведущими органами армянской прессы проделала довольно последовательную и эффективную работу по популяризации произведений Абовяна и армянских писателей в целом, особенно после основания Кавказского общества армянских писателей в декабре 1912 года.

Ներածություն

Խաչ. Աբովյանի՝ 1858 թ. լույս տեսած «Վերք Հայաստանի» վեպը մեծ հետաքրքրություն առաջացրեց Աբովյանի անձի և գործունեության նկատմամբ: Գրքի հեղինակը՝ որպես մանկավարժ, հատկապես Թիֆլիսում և Երևանում ծանոթ էր շատերին, ավելի քչերին՝ որպես Դորպատի համալսարանի շրջանավարտ և «Նախաշավիղ» դպրոցական դասագրքի հեղինակ, էլ ավելի քչերին՝ որպես գրող, և ընթերցասեր հասարակության հե-

տաքրքրությանը իր ավելի քան համեստ ուժերի սահմաններում առաջինը փորձեց բավարարել ժամանակի հայ մամուլը: Առաջինը Մոսկվայում լույս տեսնող «Հյուսիսափայլ» ամսագիրն էր, որն արդեն իր երկրորդ համարում (1858 թ., փետրվար) դեռ «Վերք Հայաստանի» վեպի լույս տեսնելուց էլ առաջ տպագրել է Աբովյանի համառոտ կենսագրությունը¹ և որոշ դրվագներ նրա մանկավարժական գործունեությունից (Նալբանդեանց, 1858: 144-148)², իսկ 1859 թ. մարտին և ապրիլին՝ արդեն «Վերք Հայաստանի»-ի լույս տեսնելուց հետո, Ստ. Ոսկանը Փարիզում իր հիմնադրած «Արևմուտք» կիսամյա հանդեսում որոշ կենսագրական տեղեկություններ է հայտնել նրա մասին՝ քաղված առավելապես եվրոպացիների գրածներից (Ոսկան, 1859 ա: 41-42), և տվել «Վերքի» իր գնահատականը (Ոսկան, 1859 բ: 54-56), որին իր «Մեռելահարցուկ» վեպի մի ծանոթության մեջ նույն 1859 թ. անդրադարձել է Մ. Նալբանդյանը՝ բարձր գնահատելով Աբովյանի վեպը նույնիսկ եվրոպական չափանիշներով (Նալբանդեանց, 1859: 697-698)³: Հաջորդ տարիներին՝ 1860-ին և 1861-ին, Թիֆլիսի «Կոունկ Հայոց աշխարհին» հանդեսը տպագրել է երեք նյութ՝ «Պարոն Խաչատուր Աբովեանը եւ իր Զանգին» (Աղաբեկեան, 1860: 867-875), վեպի «Զանգի» հավելվածը («Կոունկ...», 1860, թ. 11, էջ 876-890) և «Մէկ քանի խօսք Ապովեանի վերայ» ծավալուն հոդվածը (Տեր-Ազարեանց, 1861: 531-553): «Հյուսիսափայլը», «Արևմուտքը» և «Կոունկ Հայոց աշխարհին», այսպիսով, իրենց այս հրապարակումներով դրել են աբովյանագիտության հիմքը, և նրանց շնորհակալ աշխատանքը արդեն 1870-ականներին և հետո շարունակել են այլ լրագրեր ու հանդեսներ՝ ձգտելով իրենց համեստ լուման ներդնել «երևելի հայկազնի» (Մ. Նալբանդյան) և «արժանավոր, մեծ ազգասեր հայի» (Ստ. Նազարյան) գործունեության և ստեղծագործության արժևորման ու հանրահռչակման գործում⁴: Դրանց թվում էր նաև Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթը (1909-1918), որն

¹ Այդ կենսագրականի հեղինակը Ստ. Նազարյանն է, որը հարկ էր համարել «Հրատարակողի կողմից» ծանոթությամբ ներկայացնել կենսագրությունը հասարակությանը գրեթե անհայտ մի մարդու, որին ինքը ճանաչում էր դեռ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներից: Նազարյանը բարձր է գնահատել Աբովյանին՝ որպես մարդու և ազգանվեր գործչի:

² «Մահացուցակ» խորագրի ներքո տպագրված նյութը գրվել է Աբովյանի աշակերտներից մեկի՝ բժիշկ Գևորգ Գեղամյանցի մահվան առիթով: Նալբանդյանը ևս մեծ հարգանքով է արտահայտվել Աբովյանի մասին:

³ Նալբանդյանի այս գնահատականը հետագայում հիմք է հանդիսացել Աբովյանի վեպը արժևորելիս, իսկ նրա դրոյթները այս կամ այն կերպ հաճախ են կրկնվել:

⁴ Նման լրագրերի ու հանդեսների թիվը անցնում է 30-ից, դրանց թվում են ինչպես ժամանակի ամենահայտնի պարբերականները («Մեղու Հայաստանի», «Մշակ», «Փորձ», «Արձագանք», «Նոր-Դար», «Մուրճ», «Լումա», «Գործ» և այլն), այնպես էլ երկրորդական և երրորդական հրատարակություններ («Արշալույս», «Ընկեր», «Երկիր», «Հովիվ», «Լրա-

իր տասնամյա գործունեության ընթացքում ամենաշատն է անդրադարձել Աբովյանի անձին ու գործին՝ տպագրելով ավելի քան 20 մեծ ու փոքր նյութ: Այդ բազմազան նյութերը ըստ բովանդակության կարելի է բաժանել 3 խմբի՝ 1. Աբովյանին հուշարձան կանգնեցնելու առիթով կարծիքներ, առաջարկներ, կոչեր և այլն, 2. 1913 թ. դեկտեմբերի 5-ին Թիֆլիսում Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթում Լեոյի զեկուցումը Աբովյանի մասին ու նրա արձագանքները, և 3. Լեոյի «Զանգվի ավերից» ծավալուն խոհագրությունը, որը պարունակում է հետաքրքիր դիտարկումներ Աբովյանի անձի և ստեղծագործության վերաբերյալ, նշվում են մի քանի կարևոր խոչընդոտներ աբովյանագիտության զարգացման ճանապարհին, և արվում առաջարկներ դրանք վերացնելու ուղղությամբ: Հոդվածի նպատակն է քննության ենթարկել «Հորիզոն»-ում տպագրված այս նյութերը՝ զուգադրելով դրանք այլ պարբերականներում տպագրված նմանատիպ նյութերի հետ, և որոշել դրանց տեղն ու դերը աբովյանագիտության զարգացման հետագծում:

Աբովյանի հուշարձանի ողիսականը և «Հորիզոնը»

Խաչ. Աբովյանի առաջին հուշարձանը, որն այսօր կանգնած է Քանաքեռում՝ նրա տուն-թանգարանի բակում, երկար ողիսական ունի և պատրաստվել, պահպանվել ու Հայաստան է հասել մեծ ջանքերի գնով: «Վերքի» հեղինակին հուշարձան կանգնեցնելու առաջարկը Թիֆլիսի «Նոր-Դարը» վերագրում է իրեն («Նոր-Դար», 1893, թթ. 61, 72)¹, բայց ճշմարտությունն այն է, որ հուշարձանի մասին առաջին անգամ գրվել է «Կռունկ Հայոց աշխարհին» հանդեսում դեռ 1860 թ. «Կա՛ն արդեօք մեր մեջ տակաւին այնպիսիք, որ այս անմահ հոգւոյն ու հանճարոյն համար մի յիշատակելի մահարձան կանգնել չկամենան և նրա առաջը նրանից ընդունած զգացմունքների փոխարէն սիրոյ խունկեր չնուիրեն, ո՛չ, քա՛վ լիցի, չենք կարծում...» (Աղա-

բեր», «Զանգ» և այլն), որոնք նույնպես իրենց որոշակի ներդրումն ունեն աբովյանագիտության ասպարեզում:

¹ Լրագրի թ. 72-ում տպագրված խմբագրականում, մասնավորապես, կարդում ենք. «Ուշ չէ, պէտք է յանցանքներս քաւենք, ժամանակն է վերջապէս հանելու այդ անմոռաց գործչին մոռացութեան գրկից և բազմեցնելու նրա արձանը մեր աչքի առաջ, իսկ նրա անունը՝ մեր սրտերում: Ժամանակն է վերջապէս զարթնելու թմրութիւնից. հայ ժողովուրդը պէտք է ցոյց տայ գէթ մի անգամ գիտակցաբար, որ ճանանչում է իւր մտերիւմ ու հաւատարիմ բարերարներին և գիտէ երախտագէտ սրտով վարձատրել այդ բարերարներին. Աբովեանը հայ ազգի ամենաանկեղծ բարերարներիցն է, «նրա ջանին մեռողներից», և այդ մեծ մարդու յիշատակն է, որ առաջարկում ենք յարգել ու անմահացնել»:

բէկեան, 1860: 870)¹: Ո՛չ այդ ժամանակ, ո՛չ էլ 1893-ին այդ գաղափարն իրականություն չի դարձել, մինչև որ Բաքվի Հայոց կուլտուրական միությունը Աբովյանի մահվան (անհետացման) 60-ամյակի առիթով 1908 թ. կրկին տպագրել է «Վերք Հայաստանի»-ն և որոշել Երևանում կանգնեցնել նրա հուշարձանը: Հայտարարվել է հանգանակություն պահանջվող նախ 12, ապա 18 հազար ռուբլին հավաքելու համար, և այդ գործին լծվել է նաև հայ մամուլը²: «Հորիզոնը» այս ասպարեզում եղել է ամենաակտիվներից մեկը և իր էջերում պարբերաբար տպագրել է ինչպես Աբովյանի հուշարձանի պատրաստման շուրջ արտահայտված կարծիքներ ու տարբեր առաջարկներ, այնպես էլ հաշվետվություններ հանգանակված և խմբագրություն ուղարկված գումարների մասին: Այսպես, 1910-1912 թթ. թերթը տպագրել է 13 նյութ, որոնցում հայտնի և անհայտ անձինք հպանցիկ արտահայտվել են Աբովյանի անձի ու վաստակի, հիմնականում՝ նրան վայել հուշարձան կանգնեցնելու շուրջ (տե՛ս «Հորիզոն», 1910, թթ. 84, 262, 263, 265, 266, 271-273, 275, 291, 1911, թթ. 72, 89, 1912, թ. 85): Հայոց կուլտուրական միության նախաձեռնությանը «Հորիզոնի» էջերում առաջինը Փարիզից արձագանքել է Շիրվանզադեն, որը, Անդրկովկասի հայ մամուլից տեղեկանալով դրա մասին, իր «Աբովեանի մահարձանի առիթով» վերտառությամբ տպագրված նյութում (Շիրվանզադե, 1910 ա)³ արտահայտել է իր նկատառումները, մասնավորապես՝ պահանջել է արձանի հեղինակի ընտրության համար կազմակերպել մրցույթ և դրան մասնակցելու հնարավորություն տալ նաև օտարազգի քանդակագործներին: Նա նշել է հայ մի քանի անվանի և դեռ անհայտ, բայց խոստումնալից քանդակագործների անուններ՝ Միքայել Միքայելյան (Թիֆլիս), Անդրեաս Տեր-Մարության (Փարիզ), Հակոբ Գյուրջյան (Փարիզ), Հայկ Բատիկյան (Բոստոն), Ոսկան Էֆենդի (Կ. Պոլիս), Աննա Արդության-Երկայնաբազուկ (Հռոմ)՝ պնդելով նրանց՝ մրցույթին մասնակցելու, իսկ նրանց նախագծերը հեղինակավոր ժյուրիի կողմից գնահատելու անհրաժեշտությունը: Անվանի գրողին (ինչպես նաև նկարիչ Գևորգ Բա-

¹ Խոսքը, ինչպես երևում է, գերեզման չունեցող Աբովյանի համար հուշարձան կանգնեցնելու մասին է, ինչպիսին, օրինակ, 1985 թ. Երևանում կանգնեցվել է Չարենցի հիշատակին:

² Ավելի վաղ ևս կատարվել էր հանգանակություն Աբովյանի ստեղծագործությունները տպագրելու և նրան հուշարձան կանգնեցնելու նպատակով: Մասնավորապես, դեռ 1893 թ. այդ նպատակով գումարներ են հանգանակվել և ուղարկվել «Նոր-Դար» թերթի խմբագրություն (տե՛ս «Նոր-Դար», 1893, թթ. 61, 126): Պետք է նշել նաև, որ Բաքվի Հայոց կուլտուրական միությունը ինքը ևս պահանջվող գումարը հավաքելու համար կազմակերպել է տարբեր միջոցառումներ՝ գրական երեկոներ, համերգներ, դասախոսություններ, ներկայացումներ և այլն:

³ Դա Շիրվանզադեի առաջին ելույթը չէր այդ հարցի շուրջ. առաջին անգամ նա այդ մասին գրել է 1908 թ. (տե՛ս Շիրվանզադե, 1908):

շինջաղյանին) արձագանքել է Բաքվի կուլտուրական միության գեղարվեստի բաժնի նախագահ Հակոբ Տեր-Գևորգյանը, որն իր «Արժեքների արձանի հարցը» պատասխանում որոշ պարզաբանումներ է տվել հարցի շուրջ, այն է՝ 1. ավելի լավ է, որ արձանը պատրաստվի հայ քանդակագործի ձեռքով, եթե նույնիսկ այն կատարելության տիպար չի լինելու, 2. մրցույթ հայտարարված չէ, բայց իրենք դիմել են բոլոր հայ հայտնի քանդակագործներին և հրավիրել են մասնակցելու: Նշվում են անուններ, եթե կան էլի հայտնիներ, պատրաստ են նրանց նույնպես դիմելու (Տեր-Գևորգյան, 1910 ա): Այս պարզաբանումը չի բավարարել Շիրվանզադեին, որը «Հորիզոնի» հենց հաջորդ համարում «Կրկնում եմ» վերտառությամբ տպագրված նյութում պնդել է իր առաջարկները և իր խոսքն ավարտել այսպես. «Կուլտուրական միութիւնը չարաչար կը սխալւի և կը գղջայ, եթէ ժիւրի չհրաւիրէ» (Շիրվանզադե, 1910 բ): Հայ մամուլի այլ օրգաններ ևս ակտիվորեն շոշափել են Արժեքների հուշարձանի հարցը, և այն ստացել է հասարակական լայն հնչողություն: Հայտնի և անհայտ անունների հետ միասին «Հորիզոնի» էջերում իր կարծիքը, նկատառումները, ցավն ու ավստոսանքն է արտահայտել նաև Հովհ. Թումանյանն իր «Նա պէտք է շարժի» (անստորագիր), «Ամենքը միասին» և «Դարձեալ Խաչատուր Արժեքների արձանի մասին» (անստորագիր) հոդվածներում: Թումանյանը ցավով ու տարակուսանքով արձանագրել է, որ հանգանակության հայտարարումից հետո երեք տարում հավաքվել է ընդամենը 200 ռուբլի, կոչ է արել, որ «ամեն տեղ ամեն մի հայ իր սրբազան պարտքը համարի մասնակից լինելու այս ազգային գործին ու հանդիսին ինչքանով կուզի լինի, թէկուզ մի քանի կոպեկով» (Թումանյան, 1910 ա), քանի որ «դա մի տաղանդաւոր գրողի արձան չի, դա մի անհատի արձան չի, դա հայ ժողովրդի վերքոտ սրտի արձանն է, որ կանգնելու է այնտեղ Արարատի սրբազան դաշտում սերունդներին ու դարերին ի տես, որ տեսնեն, թէ քանի սուր կայ ցցած նրա մեջ, քանի դարդ ու ցավ» (Թումանյան, 1910 բ): Նա կրկին կարճ, բայց դիպուկ ու խորը բնութագրել է Արժեքներին ու նրա գործը ու ավստոսանքով դարձյալ արձանագրել, որ, դժբախտաբար, ողջ հայությունը չէ, որ մասնակցում է հանգանակությանը, անտարբեր են հասկապես տաճկահայերը (Թումանյան, 1911): Ընդհանուր առմամբ Թումանյանի հոդվածներում արծարծվել են այն բոլոր հարցերը, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում էին Արժեքների հուշարձանին, և որոնք բարձրացվում էին ինչպես «Հորիզոնի», այնպես էլ հայ մամուլի այլ օրգանների էջերում¹: Բոլորի նպատակը նույնն էր. ընդգծել Արժեքների գործի մեծություն-

¹ Տե՛ս, օրինակ, «Ընկեր», Թիֆլիս, 1906, թ. 35, «Հովիվ», Թիֆլիս, 1906, թ. 5, «Երկիր», Թիֆլիս, 1906, թ. 2, «Լրաբեր», Աստրախան, 1908, թ. 19, «Զանգ», Բաքու, 1908, թ. 4, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, թ. 92, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1910, թ. 475, «Մշակ», 1910, թ. 42 և այլն:

նը, դարձնել նրան ազգային համախմբման յուրատեսակ խորհրդանիշ և բորբոքել ամենուր սփռված հայ ժողովրդին ազգասիրության կրակով: Բաքվի Հայոց կուլտուրական միությունը ևս հետապնդել է նույն նպատակը, և ահա Թումանյանի երկու հոդվածներից հետո դարձյալ իր խոսքն է ասել Հակոբ Տեր-Գևորգյանը՝ համաձայնելով, որ ժյուրի անպայման պետք է լինի, և ընդգծելով Թումանյանի հոդվածների կարևորությունը հայ հասարակությանը թմբիկից հանելու գործում (Տեր-Գևորգեան, 1910 ք): Այս բացատրությունից հետո Աբովյանի հուշարձանի շուրջ բորբոքված կրքերը որոշակիորեն հանդարտվել են, ժյուրիին ներկայացվել է 6 քանդակագործների (Միքայելյան, Տեր-Մարության, Բատիկյան, Հակոբ Արապյան (Կ. Պոլիս), Ե. Ռուզան-Մուրացյան (Բեռլին) և Գյուրջյան) 8 նախագիծ, որոնցից ընտրվել է փարիզաբնակ հայտնի քանդակագործ Անդրեաս Տեր-Մարությանի երկրորդ նախագիծը: 1913-ին արձանն արդեն պատրաստ էր, բայց այն ևս, ինչպես և իր տերը, ունեցել է դաժան ճակատագիր. մոտ 12 տարի Փարիզի արվեստանոցում, 1925-ից՝ Բաթումում ու Թիֆլիսում մնալուց հետո 1933-ին ի վերջո հասել է Երևան, ուր երկար թափառումներից հետո իր վերջնական հանգրվանն է գտել միայն 1964 թ. (Խանջյան, 2004: 34-38, Իսահակյան, 2020: 492-494, «Երևան» (ամսագիր), 2014, թ. 9, էջ 52): Ակնհայտ է, որ Աբովյանի այս արձանի պատրաստման գործում իր մեծ ներդրումն է ունեցել նաև հայ մամուլը և մասնավորապես «Հորիզոնը», որն ամենաշատ և ամենաազդեցիկ նյութերն է տպագրել այդ թեմայով:

Կրքեր Լեռյի մի հրապարակման շուրջ

Աբովյանի անձը, նրա ընտանեկան կյանքը և մանավանդ մինչ այժմ չբացահայտված անհետացումը գրգռել են հասարակության հետաքրքրությունը, որին էլ ուսումնասիրողները մամուլի էջերում փորձել են բավարարություն տալ: Արդեն 1850-ական թվականներին բանասերների ու պատմաբանների կողմից որոշ քայլեր են ձեռնարկվել գրողի կենսագրության այս կամ այն դրվագը լուսաբանելու, ճշտելու և նրա քիչ թե շատ ամբողջական կենսագրությունը կազմելու համար (տե՛ս Շահագիր, 1940: 366): Այդ գործում նրանց, անշուշտ, մեծապես կարող էին օգնել տարբեր արխիվներում պահվող բազմաթիվ փաստաթղթեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակի առնչվում էին Աբովյանին, և ահա գրողի մասին մամուլում տպագրված բազմաթիվ ու բազմազան նյութերում սկսում են երևալ նրա գրած և նրան գրված նամակներ, պաշտոնական գրություններ, հուշեր, ար-

Հետագայում ևս Թումանյանը անդրադարձել է Աբովյանի արձանի պատրաստման խնդրին՝ կապելով այն հայ գրականության պաշտպանության խնդրին (տե՛ս «Հորիզոն», 1917, թ. 32):

ձանագրություններ և այլն¹, որոնք հաճախ նոր լույսի տակ էին ներկայացնում գրողին, կամ էլ այդպիսի փորձ էր արվում: 1913 թ. դեկտեմբերի 8-ին Լեոն Հայ գրողների կովկասյան ընկերության 21-րդ նիստում հանդես է եկել «Նոր փաստաթղթեր Խաչատուր Աբովեանի կեանքից» զեկուցումով, որի նյութը Աբովյանի կողմից 1846 թ. գրված պաշտոնական մի գրություն էր՝ ուղղված Երևանի կոնսիստորիային («Հորիզոն», 1913, թ. 276): Խիստ ոճով գրված այդ գրությամբ Աբովյանը, որը Երևանի գավառական դպրոցի տեսուչն էր, պահանջել է կոնսիստորիայից Երևանի թեմական դպրոցից հեռացնել բոլոր աշխարհականների երեխաներին և այլևս նմաններին չընդունել, քանի որ թեմական դպրոցը կամ հոգևոր սեմինարիան կոչված էր հոգևորականներ պատրաստելու և պետք է ընդունել միայն հոգևորականների որդիներին: Լեոյի զեկուցումը մեծ հետաքրքրություն է առաջացրել ներկաների և ընդհանրապես հայ հասարակության շրջանում, Աբովյանի վարմունքի շուրջ կարծիքները բաժանվել են, ոմանց մոտ կասկածներ են առաջացել գրողի իսկական հայրենասեր և հայ լեզվի ու դպրոցի ջատագով լինելու վերաբերյալ², գտնվել են նույնիսկ այնպիսիները, ովքեր նրան կոչել են հայ դպրոցի հալածիչ, մի խոսքով՝ Լեոյի զեկուցումն առաջ է բերել հետաքրքրության նոր ալիք և առիթ դարձել արխիվները քրքրելու և փակելու չարախոս բերանները, որոնք ինչպես Աբովյանի կենդանության ժամանակ, այնպես էլ նրա մահից հետո քիչ չէին: Հարցը առավել քան լուրջ էր, քանի որ Աբովյանին՝ մեծ հայրենասերին արձան կանգնեցնելու բուռն գործունեության շրջանում ստվեր էր գցվում նրա մարդկային նկարագրի վրա, ինչը կարող էր շատ վատ հետևանքներ ունենալ: Աբովյանին պաշտպանել և նրա վարմունքը ըմբռնումով են ընդունել շատ հայտնի մտավորականներ, որոնց թվում էր նաև Ա.-Դոն՝ Աբովյանին բարձր գնահատողներից և նրա կյանքը ուսումնասիրողներից մեկը: Իր «Խ. Աբովեանը եւ Երևանի թեմական դպրոցը» ծավալուն հոդվածում նա մանրագնին քննության է ենթարկել Երևանի գավառական և թեմական դպրոցների միջև ծագած հակամարտության պատմությունը՝ օգտագործելով արխիվային փաստաթղթեր, որոնցից պարզ էր դառնում, որ Աբովյանի՝ կոնսիստորիային գրած գրությունը այդ պայքարի արտահայտություն էր և հետապնդում էր այն նպատակը, որ կատարվեր նույն կոնսիստորիայի կողմից ավելի վաղ ընդունված այն որոշումը, համաձայն որի՝ Երևանի թեմական դպրոցը պետք է հեռաց-

¹ Տե՛ս «Կոունկ հայոց աշխարհին», 1861, թ. 7, էջ 531-553, «Փորձ», 1880, թ. 8-9, էջ 191-198, «Արձագանք», 1894, թթ. 16, 123, 1896, թթ. 101, 102, «Մուրճ», 1904, թ. 1, էջ 103-107, թ. 2, էջ 98-103, թ. 3, էջ 119-128, «Տարագ», 1911, թթ. 1, 2, 4, «Նոր հոսանք», 1914, թ. 5, էջ 755-770, «Գործ», 1917, թ. 5-6, էջ 30-41, թ. 7-8, էջ 48-69 և այլն:

² Պետք է նշել, որ Լեոն ինքն է իր զեկուցման վերջում «Արեգակն էլ բծեր ունի» արտահայտությամբ տեղիք տվել նման կասկածների:

ներ աշխարհականների որդիներին և այլևս չընդունել նմաններին, իսկ գավառական դպրոցը՝ հեռացներ հոգևորականների որդիներին և չընդունել նմաններին: Համաձայն Աբովյանի գրության, որը Ա-Դոն մեջ է բերել ամբողջությամբ, թեմական դպրոցի տեսուչ Աստվածատուր Արարատյանը չի կատարել այդ որոշումը և, դեռ ավելին, գավառական դպրոցի մասին տարածել է վարկաբեկիչ տեղեկություններ՝ նպատակ ունենալով գրավել նոր աշակերտներին: Երևանի երկու դպրոցների հակամարտության պատմության, գրողի այս, ինչպես նաև այլ գրությունների քննությունը հողվածագրին բերել է այն միանշանակ եզրակացության, որ «Աբովեանը հայ դպրոցը չի հալածել, այլ սիրել է և նա ձգտել է իր մանկավարժական գործունեությունը տեղափոխել պետական դպրոցից ազգային դպրոցները» (Ա-Դո, 1914): Նույնը՝ նաև հայոց լեզվի պարագայում. «Աբովեանը հայ լեզուն չի հալածել, այլ սիրել է և ոչ միայն սիրել է, այլ աշխատել է գաւառական դպրոցում նրան պատուաւոր տեղ տալ...» (անդ): Իր հողվածի վերջում Ա-Դոն ևս, այնուամենայնիվ, կասկածի առիթ է տվել՝ Աբովյանի՝ Երևանի թեմական դպրոցի նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքը գնահատելով որպես «մի փոքրիկ բաց այն խոշոր ծառայութեան շարքի մէջ, որ նա ցոյց է տւել հայ դպրոցին, առանձնապէս հայ լեզւին» (անդ): Հարցին «Հորիզոնի» էջերում անդրադարձել են այլ անձինք ևս, որոնցից մեկն էլ Աշ. Մ.-ն էր Էջմիածնից¹: Իր դարձյալ «Թ. Աբովեանը եւ Երեւանի թեմական դպրոցը» խորագրով անդրադարձում նա քննադատել է Ա-Դոյին անհետևողականության համար, նրա վերը հիշատակած «փոքրիկ բացը» համարել մեղադրանք և անվերապահորեն պաշտպանել Աբովյանին՝ գրելով. «Աշխարհականների որդիների ընդունելու հարցին... Աբովեանը մասնակցել է որպէս կառավարութեան պաշտօնեայ. այդ են ասում նրա գրութիւնները և ժամանակի հասարակական պայմանները» (Աշ. Մ., 1914 ա)²: Աշ. Մ.-ի անդրադարձին հետևել է Եղիշե ավագ քահանա Գեղամյանցի նամակը թերթի խմբագրությանը, որտեղ հեղինակը Աբովյանի գրությունը բացատրել է որպես պետական պահանջի արտահայտություն, պահանջ, որը վերնների կողմից չի չեղարկվել, բայց տեղերում էլ խստորեն չի գործադրվել (Գեղամեանց, 1914): Եվ, ի վերջո, հարցին անդրադարձել է նաև Երևա-

¹ Լրագրող Աշոտ Հախումյանն է (1890-1938):

² Սա Աշ. Մ.-ի առաջին ելույթը չէր այս թեմայով. առաջին անգամ նա Լեոյի զեկուցմանը անդրադարձել էր Ա-Դոյից էլ առաջ՝ 1914 թ. հունվարին Երևանի «Խոսք» շաբաթաթերթում տպագրելով իր «Դիտողութիւններ և քննելի տարակուսանքներ Խաչատուր Աբովեանի մասին» հոդվածը: Նա քննադատել է Լեոյին՝ Աբովյանի անվան վրա թեկուզև չուզելով ստվեր գցելու փորձի համար. «Լեօի կարծիքը մենք համարում ենք տարակուսելի, իսկ Աբովեանին «բծերի» պատւին արժանացնելը՝ անհեռատեսութիւն, մի հանգամանք, որ ներելի չէ պ. Լեօին» (Աշ. Մ., 1914 ք):

նի թեմական դպրոցի նախկին տեսուչ Արարատյանի թոռը՝ Մ. ավագ քահանա Մելյանը, որը «Խ. Աբովեանի մի վարմունքի մասին» հոդվածում բնականաբար պաշտպանել է իր պապին՝ Աբովյանի գրություն-պահանջը բացատրելով երկու տեսուչների անձնական վատ հարաբերություններով և Աբովյանի՝ Արարատյանին «վնասելու տենչով», քանի որ գրողը ընդունելություն չէր գտել «հայերի ու ազգային շրջանակներում», իսկ Արարատյանը, ընդհակառակը, «պաշտօն է ունեցել հայ շրջանում, հայ հաստատությունների մեջ, ընդունւած է եղել բարձր հոգևորականութեան կողմից»։ Անձնական վատ հարաբերությունների պատճառներից մեկն էլ, ըստ քահանայի, եղել է այն, որ երկու տեսուչների այգիները Քանաքեռում գտնվել են կողք կողքի, և Աբովյանը աչք է ունեցել իրենց այգու վրա, որը իր պապը թեև վաճառել է ուրիշի, բայց էլի չի ազատվել Աբովյանից (Մելեան, 1914)։ Ակնհայտ է, որ Արարատյանի թոռան փաստարկներն ու նկատառումները միակողմանի են, իսկ «այգու խնդիրը» մեջ բերելով՝ նա գրողին ներկայացրել է որպես նախանձ, մանրախնդիր ու քինոտ մարդու, որից ամեն ինչ կարելի էր սպասել։ Իհարկե, Աբովյանը՝ որպես մարդ, որպես մանկավարժ և որպես պետական պաշտոնյա, անկասկած ունեցել է իր թույլությունները, բայց է՛լ ավելի ակնհայտ է, որ իր գրությամբ նա ձգտել է ավելացնել Երևանի գավառական դպրոցի աշակերտների թիվը, բարձրացնել նրա վարկը և ոչինչ ավելի։ Ավելացնենք միայն, որ Աբովյանի պահանջից հետո Արարատյանը ազատվել է թեմական դպրոցի տեսչի պաշտոնից և տեղափոխվել Էջմիածին՝ պաշտոն ստանալով Սինդոում։

«Զանգուի ավերից»․ մեծարանք, գնահատականներ և առաջարկներ

Լեոյի անունը «Հորիզոնի» էջերում հաճախ է երևացել, և դրա պատճառն այն չէր, որ նա թերթի խմբագիր-հրատարակիչներից մեկն էր, այլ նրա գրական հետաքրքրությունները և ակտիվ մասնակցությունը 1912 թ. Հովհ. Թումանյանի կողմից հիմնադրված Հայ գրողների կովկասյան ընկերության նիստերին։ Նրա գրական հետաքրքրություններից մեկն էլ, ինչպես տեսանք, Աբովյանի կյանքն ու ստեղծագործությունն էր, և նա առիթը բաց չի թողել անդրադառնալու մեծ քանաքեռցուն ու նրա վեպին։ 1910 թ. Լեոն այցելել է Հայաստան, մասնավորապես՝ Երևան և Էջմիածին, և առիթից օգտվելով՝ եղել նաև Քանաքեռում՝ գրողի հայրական տանը, ուր նա ծնվել ու մեծացել էր։ Այցելությունը Աբովյանի ծննդավայր մեծապես հուզել և ոգևորել է Լեոյին, ինչի շնորհիվ ծնվել է «Զանգուի ավերից» ծավալուն խոհագրությունը, որը առանց որևէ չափազանցության կարող ենք անվանել գրողի, նրա ստեղծագործության և հայ գրականության մեջ նրա դերի առաջին քիչ թե շատ գիտական արժևորման փորձ։

Աբովյանի և նրա վեպի մասին մամուլում տպագրված շատ նյութերում որոշակիորեն առկա են գնահատման ու արժևորման համեստ դրսևորումներ, բայց, որպես կանոն, դրանք հանգում են կադապրային ձևակերպումների՝ հայ նոր գրականության հիմնադիր, աշխարհաբար լեզվի ստեղծող, «դարաւոր երկունքը ծնել է Աբովեանին, Աբովեանը ծնել է հայ ազգին» (Շահպազեան, 1906:275) և այլն և այլն: Իսկ Լեոն ոչ միայն ձևակերպել է, թե ինչում է Աբովյանի մեծությունը, այլ նաև բացատրել է, թե ինչու է այդպես: Այսօր ևս 116 տարի առաջ գրված այդ խոհագրության շատ դրույթներ մնում են արդիական և որպես գիտական աբովյանագիտության առաջին փորձ՝ ինքնին արժեքավոր են և արժանի ուշադրության, մանավանդ որ հետազայում աբովյանագիտությունը ընդունել և զարգացրել է այդ դրույթներից շատերը: Այսպես, Լեոն ընդգծել է Քանաքեռի (Աբովյանի) «գարմանալի և անչափ սիրելի» դերը հայ գրականության մեջ. «Դա գերազանցօրէն ժողովրդական ոգու, ժողովրդական շունչի տիրապետութիւնն է, առանց որի մենք չէինք ունենալ մեր նորագոյն գրականութիւնը, այսինքն մեր միակ պարծանքն ու փրկութիւնը, մեր աներկբայ յոյսն ու ամուր պատւանդանը» (Լեո, 1910 ա): Այդ ժողովրդական շնչով էլ նա ստեղծել է եվրոպական իմաստով գեղարվեստ, գեղարվեստական գրականություն՝ «ցոյց տալու համար թէ հայն էլ ունեցել է և ունի սիրտ, թէ նա էլ կարող է «սրտի բաներ» գրել... Հետևաբար, էութիւնը, մեծութիւն, երախտագիտութիւն, նւիրական մեծարանք ստեղծողը այդ գեղարվեստն է: Եւ մենք նրա մէջ էլ պիտի որոնենք Աբովեանցի դերն ու նշանակութիւնը» (Լեո, 1910 բ): Լեոն նշել է նաև այն պատմական իրողությունը, որը դրդել է Աբովյանին գրիչ վերցնել և իր կրակված սրտի զգացումները թղթին հանձնել. դա Արևելյան Հայաստանի միացումն էր Ռուսաստանին, որը ցնցող ազդեցություն է ունեցել ժամանակակիցների վրա. «Հազարները, բիւրերը ցնցեցին, բայց միմիայն Աբովեանցի մէջ էր, որ այդ հզօր ցնցումը գեղարվեստական ստեղծագործութեան կրակը վառեց» կամ՝ «Ոգևորւել անհունապէս և ոգևորել ուրիշներին, արբենալ իր կոչումով, վարակել ուրիշներին իր հոգու փոթորկացող յոյզերով, սքանչանալ իր մտապատկերներով և սքանչացնել ուրիշներին – այս է ստեղծագործութիւնը» (Լեո, 1910 գ): Անտեսված չէ նաև այն հանգամանքը, որ իր վեպով Աբովյանը դարձել է գրական դպրոցի հիմնադիր. «Նա դարձաւ մի նոր, մեր պատմութեան մէջ չտեսնուած դարագլուխ և այդ ոգով լցրեց ոչ միայն իր գրականութիւնը, այլ և այն, որ պիտի գար իր էտնից, պիտի ապրէր իր տեսիլներով, իր ոգևորութեամբ» (Լեո, 1910 դ): Ավելի կարևորն այն է, որ Լեոն ոչ միայն գնահատել, արժևորել է Աբովյանի վեպը և փորձել է հիմնավորել իր գնահատականները, այլև արել է հիմնավոր առաջարկներ Աբովյանի հիշատակը հավերժացնելու ուղղությամբ. նրան պղնձե կամ

երկաթե հուշարձան կանգնեցնելուց առաջ պետք է ստեղծել նրա գրական հուշարձանը, այն է՝ կազմել և հրատարակել գրողի երկերի լիակատար ժողովածուն, ստեղծել նրա գիտական ամբողջական կենսագրությունը և պատմական-քննադատական մի ուսումնասիրություն, «որի մեջ երևար Աբովեանցի իսկական գրական-հասարակական արժեքը, նրա տեղը մեր գրականության պատմության մեջ, նրա կատարած գործի ամբողջական գնահատությունը» (Լեո, 1910 է): Ինչ վերաբերում է Աբովյանի արձանը կանգնեցնելու տեղին, Լեոն նշել է, որ նրա համար միակ հարմար և ճիշտ տեղը գրողի ծննդավայրն է՝ Քանաքեռը, և հիմնավորել է իր առաջարկը ինչպես Աբովյանի վեպով, այնպես էլ իտալական Ազոլո գյուղում ծնված Հռոմի պապ Պիոս X-ին կանգնեցված հուշարձանի օրինակով:

Լեոն Քանաքեռում այցելել է Աբովյանի հայրական տուն և տեսել այն սենյակը, ուր նա ապրել է: Տեսածը խորապես ցնցել է նրան. տան և հնոտիներ պահելու պահեստի վերածված սենյակի թշվառ վիճակը կասկած չի թողել, որ վաղ թե ուշ դրանք ևս կվերածվեն ավերակների, ինչպես Քանաքեռի բազմաթիվ տներ: Իր ընդարձակ խոհագրությունը նա ավարտել է հայությանն ուղղված սրտագին կոչով. «Ազատեցեք այս թանկագին յիշատակարանը կարասներ, բղուղներ, անպետք ու կեղտոտ իրեր պահելու տխուր պարտականությունից: Մաքրեցեք նրան, խնամք տարեք նրա պահպանության համար: Դարձրեք նրան Աբովեան թանգարան՝ հաւաքելով նրա մեջ հեղինակի ձեռագիրը, նամակները, տպագրած աշխատությունները և առհասարակ ամբողջ գրականությունը նրա մասին» (անդ): Ինչպես տեսնում ենք, Լեոն նախանշել է այն ամբողջ աշխատանքը, որը պետք է կատարվեր տասնամյակներ անց, մասնավորապես՝ Աբովյանի տուն-թանգարանի բացումը 1939 թ. և Անդրեաս Տեր-Մարությանի պատրաստած արձանի տեղադրումը նրա բակում 1964 թ.:

Եզրակացություններ

Հայ մամուլը, սկսած 1850-ական թթ. վերջերից, իր համառոտ ու ծավալուն հրապարակումներով անդրադարձել է Խաչատուր Աբովյանի կյանքին ու ստեղծագործությանը, մեծ ուշադրության է արժանացել հատկապես նրա զլուխգործոցը՝ «Վերք Հայաստանի» վեպը: Ժամանակային առումով թեև ոչ առաջիններից, այնուամենայնիվ իր տպագրած նյութերի քանակով ու որակով Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթն (1909-1918) հիրավի առաջիններից է: Բարձր գնահատելով Աբովյանի վաստակը հայ նոր գրականության սկզբնավորման գործում և նպատակ ունենալով հանրահռչակել նրա անունը՝ օրաթերթն իր էջերում տպագրել է Աբովյանին առնչվող բազմազան նյութեր: Զգալի է նրա ներդրումը մեծ հայրենասերի հուշարձանի համար

հանգանակվող գումարը հավաքելու գործում. «Հորիզոնը» մեծ ժողովրդականություն և վստահություն վայելող օրգան էր, ուներ ընթերցողների բավականին մեծ բանակ, մեծ ճանաչում ունեցող խմբագիրներ ու աշխատակիցներ, ձգտում էր բազմակողմանիորեն ու անաչառ լուսաբանել հայության կյանքի այժմեական ու ցավոտ հարցերը, այդ պատճառով էլ նրա խոսքը ազդու էր ու հեղինակավոր: Պատահական չէ, որ Հայ գրողների կովկասյան ընկերության նիստերի, դասախոսությունների և այլ միջոցառումների վերաբերյալ նյութերը տպագրվում էին հենց այդ թերթում: Հայ գրական կյանքում Աբովյանին վերաբերող ամեն մի հարց իր արտացոլումն է գտել օրաթերթի էջերում, որտեղ ճշմարտությունը բացահայտելու նպատակով արտահայտվելու իրավունք են ստացել բոլորը: Հենց «Հորիզոնում» է տպագրվել Լեոյի «Զանգվի ափերից» ծավալուն խոհագրությունը, որը Աբովյանի ստեղծագործության գիտական արժևորման առաջին փորձն է և միաժամանակ բարձրացնում է բազմաթիվ հարցեր, որոնք անհաղթահարելի խոչընդոտ էին աբովյանագիտության զարգացման ճանապարհին: Հայ մամուլի այլ ճանաչված օրգանների հետ միասին «Հորիզոնն» իր հրապարակումներով ստեղծել է աբովյանագիտության այն սաղմնային վիճակը, որը հետագայում անվանի աբովյանագետների տքնաջան աշխատանքի շնորհիվ պետք է վերածվեր իսկական գիտության:

Գրականության ցանկ

1. **Ա-Ղո**, Խ. Աբովեանը եւ Երեւանի թեմական դպրոցը, «Հորիզոն», Թիֆլիս, 1914, թ. 91:
2. **Աղաբէկեան Մ.**, Պարոն Խաչատուր Աբովեանը եւ իր Զանգին, «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1860, թ. 11, էջ 867-875:
3. **Աշ. Մ. ա**, Խ. Աբովեանը եւ Երեւանի թեմական դպրոցը, «Հորիզոն», 1914, թ. 131:
4. **Աշ. Մ. ք**, Դիտողութիւններ և քննելի տարակուսանքներ Խաչատուր Աբովեանի մասին, «Խոսք», Երևան, 1914, թ. 3:
5. **Գեղամեանց Ե.**, Խ. Աբովեանի մասին, «Հորիզոն», 1914, թ. 140:
6. **«Երևան»** (ամսագիր), 2014, թ. 9, էջ 52:
7. **Թումանեան Յովհ. ա**, Նա պետք է շարժի, «Հորիզոն», 1910, թ. 265:
8. **Թումանեան Յովհ. ք**, Ամենքը միասին, «Հորիզոն», 1910, թ. 266:
9. **Թումանեան Յովհ.**, Դարձյալ Խաչատուր Աբովյանի արձանի մասին, «Հորիզոն», 1911, թ. 72:
10. **Իսահակյան Ավ.**, Խոհ Աբովյանի արձանի մոտ, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 11, Երևան, Էդիթ Պրինտ, 2020, էջ 492-494:
11. **Լեօ ա**, Զանգուի ափերից, «Հորիզոն», 1910, թ. 263:
12. **Լեօ ք**, Զանգուի ափերից, «Հորիզոն», 1910, թ. 265:
13. **Լեօ գ**, Զանգուի ափերից, «Հորիզոն», 1910, թ. 270:

14. **Լեօ դ.** Զանգուի ավերից, «*Հորիզոն*», 1910, թ. 275:
15. **Լեօ ե.** Զանգուի ավերից, «*Հորիզոն*», 1910, թ. 279:
16. **Խանջյան Ա.**, Երևանի արձանները, Երևան, ՎՄՎ – Պրինտ, 2004, 144 էջ:
17. «**Կոունկ Հայոց աշխարհին**», Թիֆլիս, 1860, թ. 11, էջ 876-890:
18. «**Հիսսիսափայլ**», 1858, թ. 2, էջ 144-146:
19. «**Հորիզոն**», 1913, թ. 276:
20. **Մելեան Մ.**, Խ. Աբովեանի մի վարմունքի մասին, «*Հորիզոն*», 1914, թ. 143:
21. **Նալբանդեանց Մ.**, Մահացուցակ, «*Հիսսիսափայլ*», 1858, թ. 2, էջ 143-154:
22. **Նալբանդեանց Մ.**, Մեռելահարցուկ, «*Հիսսիսափայլ*», 1859, թ. 9, էջ 665-708:
23. «**Նոր-Դար**», Թիֆլիս, 1893, թթ. 61, 72, 126:
24. **Շահազիզ Եր.**, Դիվան Խաչատուր Աբովյանի (հ. 1), Երևան, Արմֆանի հրատ., 1940, 371 էջ:
25. **Շահապազեան Յ.**, Դարերի երկունքը, «*Ընկեր*», Թիֆլիս, 1906, թ. 35:
26. **Շիրվանզադե**, Աբովեանի արձանի առիթով, «*Գործ*», Թիֆլիս, 1908, թ. 45:
27. **Շիրվանզադե ա.** Աբովեանի մահարձանի առիթով, «*Հորիզոն*», 1910, թ. 84:
28. **Շիրվանզադե բ.** Կրկնում եմ, «*Հորիզոն*», 1910, թ. 263:
29. **Ոսկան Ստ. ա.** Խաչատուր Աբովեան, «*Արեւմուտք*», Փարիզ, 1859, թ. 6, էջ 41-42:
30. **Ոսկան Ստ. բ.** Խաչատուր Աբովեան, «*Արեւմուտք*», Փարիզ, 1859, թ. 7, էջ 54-56:
31. **Տեր-Ազարեանց Մ.**, Մէկ քանի խօսք Ապովեանի վերայ, «*Կոունկ Հայոց աշխարհին*», Թիֆլիս, 1861, թ. 7, էջ 531-553:
32. **Տեր-Գեորգեան Յ. ա.** Խ. Աբովեանի արձանի հարցը, «*Հորիզոն*», 1910, թ. 262:
33. **Տեր-Գեորգեան Յ. բ.** Աբովեանի արձանի հարցը, «*Հորիզոն*», 1910, թ. 271:

References

1. **A-Do**, Kh. Aboveany yev Yerevani t'emakan dprots'y [Kh. Abovyan and the Yerevan Diocesan School], "*Horizon*", Tiflis, 1914, № 91 (In Armenian).
2. **Aghabekean M.**, Paron Khach'atur Aboveany yev ir Zangin [Mr. Khachatur Abovyan and his Zangi], "*Krunk Hayots' ashkharhin*", Tiflis, 1860, № 11, pp. 867-875 (In Armenian).
3. **Ash. M. a**, Kh. Aboveany yev Yerevani t'emakan dprots'y [Kh. Abovyan and the Yerevan Diocesan School], "*Horizon*", 1914, № 131 (In Armenian).
4. **Ash. M. b**, Ditoghut'yunner yev k'nneli tarakusank'ner Khach'atur Aboveani masin [Observations and Investigable Doubts about Khachatur Abovyan], "*Khosk*", Yerevan, 1914, № 3 (In Armenian).
5. **Geghameants' Ye.**, Kh. Aboveani masin [About Kh. Abovyan], "*Horizon*", 1914, № 140 (In Armenian).
6. «**Horizon**», 1913, № 276 (In Armenian).
7. «**Hyusisap'ayl**» ["Northern Lights"], 1858, № 2, pp. 144-146 (In Armenian).
8. **Isahakyan Av.**, Khoh Abovyani ardzani mot [Thoughtful near the Statue of Abovyan], Yerkeri liakatar zhoghovatsu 14 hatorov, h. 11 [Complete Collection of Works in 14 Volumes, Vol. 11], Yerevan, Edit Print, 2020, pp. 492-494 (In Armenian).
9. **Khanjyan A.**, Yerevani ardzannery [The Statues of Yerevan], Yerevan, VMV-Print, 2004, 144 p. (In Armenian).

10. «**Krrunk Hayots' ashkharhin**» ["Crane of the Armenian World"], Tiflis, 1860, № 11, pp. 876-890 (In Armenian).
11. **Leo a**, Zangui ap'erits' [From the shores of Zangu], "*Horizon*", 1910, № 263 (In Armenian).
12. **Leo b**, Zangui ap'erits' [From the shores of Zangu], "*Horizon*", 1910, № 265 (In Armenian).
13. **Leo g**, Zangui ap'erits' [From the shores of Zangu], "*Horizon*", 1910, № 270 (In Armenian).
14. **Leo d**, Zangui ap'erits' [From the shores of Zangu], "*Horizon*", 1910, № 275 (In Armenian).
15. **Leo e**, Zangui ap'erits' [From the shores of Zangu], "*Horizon*", 1910, № 219 (In Armenian).
16. **Melean M.**, Kh. Aboveani mi varmunk'i masin [On an act of Kh. Abovyan], "*Horizon*", 1914, № 143 (In Armenian).
17. **Nalbandeants' M.**, Mahats'uts'ak [Obituary], "*Hyusisapayl*", 1858, № 2, pp. 143-154 (In Armenian).
18. **Nalbandeants' M.**, Merrelaharts'uk [Summoner of spirits], "*Hyusisapayl*", 1859, № 9, pp. 665-708 (In Armenian).
19. «**Nor-Dar**» [New Century], Tiflis, 1893, № 61, 72, 126 (In Armenian).
20. **Shahaziz Yer.**, Divan Khach'atur Abovyani (h. 1) [Divan of Khachatur Abovyan (Vol. 1)], Yerevan, Armfan Publishing House, 1940, 371 p. (In Armenian).
21. **Shahpazean H.**, Dareri yerkunk'y [The Twoness of the Ages], "*Ynker*", Tiflis, 1906, № 35 (In Armenian).
22. **Shirvanzade**, Aboveani ardzani arrit'ov [On the Occasion of the Statue of Abovyan], "*Gorts*", Tiflis, 1908, № 45 (In Armenian).
23. **Shirvanzade a**, Aboveani mahardzani arrit'ov [On the Occasion of Abovyan's Tombstone], "*Horizon*", 1910, № 84 (In Armenian).
24. **Shirvanzade b**, Krknum em [I repeat], "*Horizon*", 1910, № 263 (In Armenian).
25. **Ter-Azareants' M.**, Mek k'ani khosk' Apoveani veray [A Few Words about Apovyan], "*Krunk Hayots' ashkharhin*", Tiflis, 1861, № 7, pp. 531-553 (In Armenian).
26. **Ter-Georgian H. a**, Kh. Aboveani ardzani harts'y [The Issue of the statue of Kh. Abovian], "*Horizon*", 1910, № 262 (In Armenian).
27. **Ter-Georgian H. b**, Aboveani ardzani harts'y [The Issue of the Statue of Abovyan], "*Horizon*", 1910, № 271 (In Armenian).
28. **T'umanean Hovh. a**, Na petk' e sharzhi [He must move], "*Horizon*", 1910, № 265 (In Armenian).
29. **T'umanean Hovh. b**, Amenk'y miasin [Everyone Together], "*Horizon*", 1910, № 266 (In Armenian).
30. **T'umanean Hovh.**, Dardzyal Khach'atur Abovyani ardzani masin [Again about the Statue of Khachatur Abovyan], "*Horizon*", 1911, № 72 (In Armenian).
31. **Voskan St. a**, Khach'atur Abovean, "*Arevmutk*", Paris, 1859, № 6, pp. 41-42 (In Armenian).
32. **Voskan St. b**, Khach'atur Abovean, "*Arevmutk*", Paris, 1859, № 7, pp. 54-56 (In Armenian).
33. «**Yerevan**» (amsagir) ["Yerevan" (journal)], 2014, № 9, p. 52 (In Armenian).

Արմեն Մանուկյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող: Գիտական

հետաքրքրությունների շրջանակը՝ հայ նոր և նորագույն գրականություն: Մասնակցել և մասնակցում է հայ դասականների՝ Բաֆֆու, Լևոն Շանթի, Ավ. Բաախանյանի և Նիկոլ Աղբալյանի երկերի ժողովածուների ակադեմիական հրատարակության հատորների կազմմանը (11 հատոր), հեղինակ է քսանից ավելի գեղունակների և գիտական հոդվածների:

ORCID ID: 0000-0002-3050-1055

manukyan-armen@mail.ru

Armen Manukyan – PhD in Philology, Senior Researcher at the M. Abeghyan Institute of Literature of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Research interests: new and modern Armenian literature. Participated and participates in the compilation of volumes of the academic edition of the collected works of Armenian classics – Raffi, Levon Shant, Av. Isahakyan and Nikol Aghbalyan (11 volumes), author of more than twenty reports and scientific articles.

ORCID ID: 0000-0002-3050-1055

manukyan-armen@mail.ru

Армен Манукян – кандидат филологических наук, старший научный сотрудник института литературы им. М. Абегаи НАН РА. Научные интересы: новая и новейшая армянская литература. Участвовал и участвует в работах составления томов академического издания собраний сочинений армянских классиков – Раффи, Левона Шанта, Ав. Исаакяна и Никола Агбальяна (11 томов), автор более двадцати докладов и научных статей.

ORCID ID: 0000-0002-3050-1055

manukyan-armen@mail.ru